ՊԱՏՄԱԿԱՆ

ԼԵՎՈՆ Գ ԹԱԳԱՎՈՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՏՊԱԳԻՐ ԴԻՄԱՊԱՏԿԵՐԸ

Հայ միջնադարյան արվեստի պատմության մեջ որոշակի տեղ ունի դիմապատկերման ժանրը, որն իր հարուստ արտահայտությունն է գտել ձեռագրական արվեստում: Առանձնապես ուշագրավ են միջնադարյան նկարիչների պատկերած պատմական նշանավոր անձանց թե՛ իրական և թե՛ երևակայական դիմանկարները:

Այս առումով չափազանց հետաքրքրական է կիլիկյան Լևոն Գ թագավորի դիմապատկերների շարքը.

1. Լևոն Գ-ի պատանեկության պատկերը (Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռ. 8321, Ավետարան, ԺԳ դ., նկարիչ՝ Թորոս Ռոսլին):

2. Լևոն Գ և Կեռան թագուհի (Երուսաղեմ, Ձեռ. 2660, Ավետարան, 1262 թ., նկարիչ՝ Թորոս Ռոսլին):

3. Լևոն Գ, Կեռան և նրանց հինգ զավակները (Երուսաղեմ, Ձեռ. 2563, Ավետարան, 1272 թ.):

4. Լևոն Գ թագավորը մանուկ Հիսուսի առջև աղոթելիս (Լոնդոն, Բրիտանական գրադարան, Ձեռ. 13993, Ժամագիրք, ԺԳ դ., նկարիչ՝ Ստեփանոս Վահկացի):

Հիշյալ դիմանկարներից յուրաքանչյուրը բազմիցս արժանացել են ուշադրության և տպագրվել:

Երկար ժամանակ քննության առարկա է դարձել հատկապես Լևոն Գ-ի պատանեկության նկարը: Ձեռագիրը Կիլիկիայից տեղափոխված է եղել Ղրիմ, այնտեղից էլ՝ Նոր Նախիջևան: Այս ընթացքում նկարը պոկվել է ձեռագրից: Այնուհետև անհայտ է մնացել, թե ո՞ր ձեռագրին է պատկանել այն: Այս առիթով տարբեր կարծիքներն են հայտնել Սարգիս արքեպս. Ջալալյանցը՝ 1846 թ. Նոր Նախիջևան կատարած այցելության ժամանակ[1], Գարեգին Հովսեփյանը[2], Երվանդ Շահազիզը[3], Մեսրոպ Տեր-Մովսիսյանը[4], Լևոն Ազարյանը[5]: Եվ այդուհանդերձ Լևոն Գ-ի մկրատահատված նկարը փակցված էր մնացել իրեն չվերաբերող մեկ այլ կիլիկյան Ավետարանում (Մատենադարան, ձեռ. 7690, 1249 թ.):

---

[1] **Սարգիս արքեպ. Ջալալյանց,** Ճանապարհորդություն, հ. Բ, Թիֆլիս, 1857, էջ 457:

[2] **Գարեգին Հովսեփյան,** Մանրանկարչության արվեստը հայոց մեջ, «Լումա», № 1, Թիֆլիս, 1902 թ., էջ 199:

[3] **Երվանդ Շահազիզ,** Պատմական պատկերներ, Թիֆլիս, 1903 թ., էջ 96:

[4] **Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյան,** Հայկական մանրանկարներ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1910 թ., № 2, գիրք 20, էջ 14:

[5] **Լևոն Ազարյան,** Կիլիկյան մանրանկարչությունը, Երևան 1964 թ., էջ 95:

Երկար որոնումներից հետո մեզ հաջողվեց Մատենադարանի ձեռագրերի շարքում գտնել Նոր Նախիջևանից բերված այն Ավետարանը, որից պոկել էին ոչ միայն Լևոն Գ-ի նկարը, այլև ձոնն ու խորանները: Այսպիսով ձեռագիրն ամբողջացավ (անհայտ մնաց միայն ձոնը) և տեր դարձավ իր անգնահատելի արժեքին: Դա Մատենադարանի № 8321 Ավետարանն է[6]:

Բոլորովին վերջերս (1994 թ.) Մատենադարանի ձեռագրերից մեկում մեզ հանդիպեց Լևոն Գ-ի պատանեկության այդ միևնույն նկարի տարբերակը՝ տպագիր օրինակով: Ձեռագիրը Մաշտոց է՝ ընդօրինակված 1685—1687 թթ. Սոհրատերում (Աղբակ-Վասպուրական), գրիչն է Հոհան Սալմաս-



տեցին[7]: Ձեռագրին ներդիր տեղադրված այս դիմապատկերի ներքևում (դարձյալ տպագիր) կա Հովսեփ Արղության սրբազանի հետևյալ մակագրությունը. «Լևոն 3 որդի 1 Հեթմոյ թագաւորի, ծնեալ ի Զապելայ թագուհւոյն յամի տն 1225. նկարեալ ի Կոստանդին կաթողիկոսէ ի միում յԱւետարանի 1243, որ այժմ է ի Նորն-Նախիջևան:

Հովսէփ սրբ. Հ. Ն. Գ.[8] 1793»: Շարունակությունը գրված է ռուսերեն տպագիր „Леонъ 3 царь Армянской сынъ царя Гегума ро. 1225“:

Հիշյալ մակագրությունից կարելի է հետևցնել, որ Ղրիմից Նոր Նախիջևան տեղափոխված ձեռագրերի շարքում Հովսեփ Արղությանին հայտնի է եղել Լևոն Գ-ի Ավետարանը, որի մեջ եղած դիմապատկերը նա կամեցել է տպագրել:

Ուշագրավ է, որ տպագիր օրինակը որքան էլ իր մանրամասնություններով համապատասխանում է բնագրին, այնուամենայնիվ համեմատությունը բացահայտում է որոշ տարբերություններ: Նախ՝ նկարը տպագրված է շրջված, և ապա՝ բնագրում Լևոն Գ-ի երկու կողմերում ոսկե հիմքի վրա կապույտով գրված «Լևոն որդի Հեթում թագ.» մակագրությունը տպագիր օրինակում բացակայում է: Դրա փոխարեն տպագիր նկարի աջ կողմի ներքևի անկյունում ավելացված է շքեղ բազկաթոռ, վրան՝ թագ: Այս միջա-

---

[6] **Գևորգյան Ա.**, Լևոն Երրորդ թագավորի Ավետարանը, Բանբեր Մատենադարանի, № 8, Երևան, 1967, էջ 143:

[7] Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռ. 3585, թ. 11բ:

[8] Հավանաբար՝ «Հովի Նախիջևանայ գաւառի»:

մտությունը կարծես փոխարինում է խորքի մակագրությանը, քանի որ գահը և թագը խորհրդանշում են դարձյալ Լևոն Գ-ի թագաժառանգ լինելու հանգամանքը, թեև Լևոնի առյուծազարդ պատմությանը և ծիրանի փիլոնը արդեն իսկ պարունակում են այդ խորհուրդը:

Նկարի շրջված տպագրությունը պետք է բացատրել տպագրական տեխնիկայի ունեցած հնարավորությամբ: Հայտնի է, որ լուսանկարչության գյուտից (1838 թ.) առաջ գոյություն չուներ ցինկոգրաֆիան[9]: Տպագիր գրքերի զարդանկարներն ու պատկերները պատրաստում էին փորագրիչները՝ փայտի կամ պղնձի վրա (կլիշե): Տպագրությունը եղել է շրջված դիրքով, որի դեպքում՝ խորքի գրությունը անընթեռնելի է դառնալու: Հավանաբար սա է պատճառը, որ խորքի գրությունը փոխարինված է գահով ու թագով: Ինչպես երևում է, տպագրության համար հիմք է հանդիսացել ոչ թե գաղափար օրինակը, այլ անհայտ նկարչի ընդօրինակությունը, որը հավանաբար կատարվել է Հովսեփ Արղությանի պատկերով: Այն հանգամանքը, որ 17—19-րդ դարերում Նոր Նախիջևանում բազմաթիվ հայ արհեստավորների շարքում եղել են նաև նկարիչներ, այդ մասին կան գրավոր վկայություններ[10]:

Մեզ հայտնի է Լևոն Գ-ի պատանեկության դիմանկարի ընդօրինակությունը՝ կատարված Հմայակ Արծաթպանյանի ձեռքով (ծնվել է 1876 թ. Նոր Նախիջևանում): Այդ նկարը տեսել է Գարեգին Հովսեփյանը Էջմիածնում և հրատարակել 1902 թ. «Լումա» ամսագրում: Ընդօրինակության մեջ Լևոնի նկարը իրեն նվիրված ձոնի հետ միասին է, նշանակում է, ընդօրինակված է գաղափար օրինակից, երբ նկարը գտնվում էր ձեռագրում: Ուստի, կասկած չի կարող լինել, որ 1793 թ. տպագիր օրինակի համար նկարիչը նույնպես օգտվել է ձեռագրում եղած բնօրինակից, բայց չի ընդօրինակել նկարին կից խորանը՝ իր ձոնով հանդերձ, ինչպես նաև Լևոն Գ-ի նկարի խորանի վերին թռչնազարդերը[11]:

Վերծանության կարոտ է նաև տպագիր նկարի ներքևում գտնվող՝ Հովսեփ Արղությանի երկլեզու մակագրությունը:

Այստեղ չափազանց կարևոր է Լևոն Գ-ի Ավետարանի գրության ժամանակի և Լևոնի տարիքի թվականի մասին Հովսեփ Արղությանի հաղորդած տեղեկությունները: Ինչպես տեսանք, Հ. Արղությանը ձեռագրին ծանոթ է եղել ավելի վաղ (18-րդ դարի վերջում), քան մյուս հետազոտողները, որոնք տարբեր կարծիքներ են հայտնել[12]: Արղությանը նկարը տեսել է ձեռագրում, որտեղ, հավանաբար, պահպանված է եղել հիշատակարանը՝ թարգաժառանգի մասին հավաստի տվյալներով, և նա անհրաժեշտ է գտել դրանք տեղադրել տպագիր նկարի տակ:

Իսկ ինչպե՞ս է նկարը տեղադրվել Վասպուրականում ընդօրինակված Մաշտոցում:

Հետագա հիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագիրը ժամանա-

---

[9] **Գ. Լևոնյան,** Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958 թ., էջ 171:

[10] **Վ. Բարխուդարյան,** Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861 թթ.), Երևան, 1967 թ., էջ 195:

[11] Լևոն Գ-ի պատանեկության նկարի հետագա տպագրությունները կատարվել են ձեռագրից պոկված և մկրատահատված վիճակով:

[12] **Ա. Գևորգյան,** նույն տեղում, էջ 146—148:

կին գտնվել է նաև Նոր Նախիջևանում, «Յունան տէր Վարդանով մայիսի 3-ին Յունան ձեռնադրեցայ Նախչեվան քաղաքիս մերոյ...»[13]:

Այսպիսով հայտնի է դառնում Լևոն Գ թագավորի հինգերորդ նկարը, ընդօրինակված անհայտ նկարչի ձեռքով, որոշ տարբերակով և տպագրված Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի տպարանում 1793 թվականին: Հովսեփ Արղությանի հաղորդած տվյալները Լևոն Գ-ի ծննդյան և Ավետարանի տարեթվերի մասին կարծում ենք, պետք է որ ավելի հավաստի լինեն[14]:

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

---

[13] Մ. Մատենադարան, Ձեռ. 3585, թ. 182ա:

[14] Լևոն Գ թագավորի ծննդյան թվականի մասին տես.

ա. **Գ. Հովսեփյան,** Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1952, էջ 859 (1228 թ.) և էջ 929 (1238 թ.):

բ. **Գ. Հովսեփյան,** Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1938 (կազմող՝ Մ. Մ. Ղազարյան): Լևոն Գ-ի դիմապատկերի ներքևում կա շփոթ մակագրություն. «Լևոն Գ-ի դիմանկարը, 1250 թ., նկարիչ՝ Թորոս Ռոսլին (՞), Ավետարան, 1249 թ., Հռոմկլա: Երևան, Մատենադարան, Ձեռ. № 8321:

գ. **Ա. Մաթևոսյան,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ., Երևան, 1984, էջ 203—206, № 160: